

ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ ԵՎ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐ

Վ. Գ. ՀԱՄԱՐՁՈՒՄՅԱՆ

ՀՆԴԵՎՐՈՊԱԿԱՆ ԾԱԳՄԱՆ ՀԱՅԵՐԵՆ ԱՐՄԱՏԻ ՏԱՐԲԵՐԱԿԱՅԻՆ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ԵՎ ՏԻՊԱԲԱՆԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

1. Վերջին երկու-երեք տասնամյակում հնդեվրոպական (հ.-ե.) լեզուների համեմատական-տիպաբանական ուսումնասիրությունը ցույց տվեց, որ հայերենը, թեև ժամանակագրորեն ուշ գրի առնված, ներկայացնում է կարևորագույն զծեր ու առանձնահատկություններ, և որոնք խիստ զմահատելի են լեզուների ոչ միայն ցեղակցության բնույթի, այլև մերձավորության աստիճանի ճշգրտման տեսակետից:

Հայերենը պարունակում է հնչյունական համակարգի, արմատաբանության և քերականական կառուցվածքի այնպիսի հնագույն տվյալներ, որոնք հաճախ վճռական դեր են ունենում հ.-ե. ընդհանուր վիճակի ուրվագծման, ցեղակից լեզուների ճյուղային («բարբառային») կամ առանձնակի տրոհման, տիպաբանական մի շարք զուգադիպումների հետ կապված առանցքային խնդիրների լուծման գործում:

2. Տվյալ դեպքում մեզ առավել զբաղեցնում են հ.-ե. արմատի վերականգնման այն սկզբունքային հարցերը, որոնք վերաբերում են արմատի տարբերակայնությանը: Նորագույն ուսումնասիրությունների տվյալները ցույց են տալիս, որ հ.-ե. ընդհանուր վիճակի համար գրեթե անհնարին է վերականգնել այս կամ այն արմատն առանց հաշվի առնելու հիմքում ընկած հասկացության հասարակական, մշակութային, դիցաբանական և այլն պատկերացումների տարբերակվածությունը: Ըստ այդմ հ.-ե. ծագման հայերեն արմատի տարբերակային վերականգնումն ու տիպաբանական վերլուծությունը դառնում են արդի հայերենագիտության կարևորագույն բնագավառներից մեկը:

3. Հ.-ե. ծագման հայերեն արմատի տարբերակային ուսումնասիրությունը հիմնավորվում է ոչ միայն համապատասխան փաստերի գոյությամբ, այլև դրանց ժամանակագրական, գործառական և տարածական առանձնահատկությունների վերհանման անհրաժեշտությամբ: Այս հարցը դարձել է առանձին ուշադրության առարկա՝ հատկապես վերջին տարիներին¹: Հ.-ե. ծագման հայերեն արմատների տարբերակային քննությամբ կարող են լուծվել մի շարք խնդիրներ՝ կապված ոչ միայն առկա մեծ թվով «անհայտ ծագման» արմատների և բառերի ծագումնային

պարզաբանման, այլև մինչև այժմ այս կամ այն կերպ ստուգաբանվածների համեմատական-տիպաբանական ճշգրտման հետ:

Հայերենի արմատաբանությունն առհասարակ ենթադրում է ցեղակից լեզուների թե՛ հնչյունական համակարգի և թե՛ քերականական կառուցվածքի ուսումնասիրման բնագավառում երևան եկած նոր փաստերի օգտագործում, ինչպես նաև հնարավորության սահմաններում դրանց ճշգրտում՝ ելնելով հատկապես հայերենի տվյալներից:

4. Այսպես, նախկին խորհրդային և արտասահմանյան լեզվաբանները, ոչ անկախ նախորդ ուսումնասիրություններից², առաջ են քաշում հ.-ե. պայթական բաղաձայնների համար ավանդաբար վերականգնվող համակարգի վերանայման խնդիրը՝ նկատի ունենալով, որ ոչ ձայնեղ բաղաձայնները պիտի ունեցած լինել ծերպաձայնային («զլտալ» կամ «էյեկտիվ») արտաբերություն³: Պ. Ջ. Հուպերը գտնում է, որ «արևելահայերենում այդ պայթականները ոչ շնչեղներ են և թեթևակի ծերպաձայնացած»⁴: Իսկ Թ. Վ. Գամկրելիձեն և Վ. Վ. Իվանովը կարծում են, որ հայերենի պայթականների համակարգը թերևս առավել հնագույն գծերով է ժառանգում ընդհանուր հ.-ե. վիճակը, և դա նկատելի է ոչ միայն ներկայիս մի քանի բարբառներում, այլև պիտի արտացոլված լիներ հին գրական տարբերակում⁵:

5. Նորագույն ուսումնասիրություններում առաջադրվում են տարբեր կարգի խնդիրներ, որոնք վերաբերում են պայթականների համակարգից շնչեղ խուլերի բացառմանը, հետնալեզվային պայթականների եռարժեք բաշխվածությանը, հ.-ե. կոկորդային և ձայնորդային հնչյունների որակական կազմի նորովի մեկնաբանությանը և այլն: Վերջիններս այս կամ այն չափով անդրադառնում են հայերենի համապատասխան փաստերի օգտագործման անհրաժեշտության վրա:

Այսպես՝ մինչև վերջին ժամանակներս հայ. հետ, այլև ոտն, յետ, ետ տարբերակային արմատների համար վերականգնվում էր հ.-ե. *pedo-ձևը⁶: Նորագույն ուսումնասիրություններն առաջադրում են հ.-ե. տարբերակային p^h/et' - // p^h/ot' - արմատները, որոնցում *t' - բաղադրիչը լավագույնս արտացոլվում է հայերենում (մեարտայան խուլ տ գրույթով արտահայտված): Նկատի ունենալով հնչյունական այս օրենքի կանոնավոր արտացոլումը հայերենում, ինչպես նաև հ.-ե. *p հնչյութի ոչ միայն հայ. հ, ւ կամ ծ, այլև հնարավոր պ արտացոլումը՝ կարելի է նաև կարծել, որ հայ. ապտակ «(ծեղքի ափով) հարված» բառը ևս պետք է բխեցնել հ.-ե. հիշյալ արմատական տարբերակներից:

Այս դեպքում նկատի ենք ունենում այն, որ նախ՝ ապտակ բառը հայերենում մինչև այժմ չունի որևէ հավաստի ստուգաբանություն, այնուհետև՝ ցեղակից և ոչ ցեղակից լեզուների տվյալները հավաստում են, որ հ.-ե. *p ~et' - // *p ~ot' - արմատներն առհասարակ ունեցել են (համեմատաբար լայն ըմբռնումով) «ոտք» իմաստը, որը ներառում էր «առջևի ոտք կամ հետևի ոտք» կոնկրետ իմաստները: Եվ եթե սա ընդունում ենք, ապա կարող ենք կարծել, որ հայ. ապտակ (ա-պտ-ակ)

բառի արմատական բաղադրիչն է լինում -պտ- մասը, և այն թխում է հ.-ե. հիշյալ արմատից (հմտ. հինդկ. upa-bda- «դոփյուն», ավ. fra-bda- «առջևի ոտք», a-bda- «ոտք դնելու արգելված տեղ», հուն. «տոնին հաջորդող օր» («մի ոտքի վրա»՝ կոնկրետ խմաստով) և այլն)⁷:

Այնուհետև, հայ, համբոյր բառը նախկինում դիտվել է անհայտ ծագման, Ջահուկյանը կապում է իրան. հաթ-ծծ ձևի հետ⁸: Աճառյանը հայ. ըմպեմ բայը կապում է ումպ արմատի հետ, այնինչ Ջահուկյանը «ենթադրում է թեմատիկ կրկնավոր ներկայից» առաջացած՝ գտնելով, որ «նախածնի վերականգնումը դժվարություններ է հարուցում», «ումպ-ը կազմվել է հայկական հոդի վրա»⁹: Այսուհանդերձ, հակված են կարծելու, որ հայ. համբոյր (հ-ամ-բո-յր), ըմպեմ (ըմ-պե-մ), ինչպես նաև բերան (բե-ր-ան) ձևերի բո-//պե-, այլև բե-բաղադրիչները տարբերակային արմատներ են, որոնք էլ հնչյունական արտացոլման և իմաստային ընդհանրության տեսակետից գտնվում են սերտ առնչության մեջ: Դրանք հանդիսանում են հ.-ե. ք^hoH – (վերջինիս կրկնավոր տարբերակ համարվող *ք^hiք^hoH -, և ըստ Մայրիոֆերի՝ *peh₃ - և այլն) արմատի արտացոլումը¹⁰:

6. Հայոց լեզվի արմատի կառուցվածքի ուսումնասիրությունը մինչև վերջին տարիները հիմնականում իրականացվել է Հ. Հյուբշմանի ղարոցի հաստատած սկզբունքների կիրառումով: Հ.-ե. լեզուների համեմատական-տիպաբանական նորագույն աշխատություններում առաջ են քաշվում այդ սկզբունքների վերանայման հետ կապված որոշակի խնդիրներ¹¹: Այսպես՝ հայերենի հնչյունական համակարգի մեջ հ.-ե. հնագույն (արխայիկ) գծերի պահպանումը, որ մեսրոպյան տառադարձությամբ ոչ այնքան ամբողջությամբ է արտացոլված, կարևոր հիմք է հանդիսանում ոչ միայն հայերենի նախագրային շրջանի, այլև հ.-ե. ընդհանրությանը վերաբերող առանձին երևույթների ավելի լայն և մանրամասն ուսումնասիրման համար¹²:

Ըստ այդմ առաջ են գալիս կարևորագույն հարցեր, որոնց լուծման նպատակով անհրաժեշտ է ելնել միանգամայն մոր սկզբունքներից: Վերջիններս պետք է մշակվեն ավանդական սկզբունքների հիման վրա, սակայն լեզվական երևույթների ավելի ծավալուն ընդգրկումով: Նման սկզբունքներից մեկն էլ, կարծում ենք, հայերենի արմատի կազմության, վերջինիս հետ կապված՝ հնչյունական և ձևաբանական (եթե ոչ նաև շարահյուսական) կառուցվածքի տարբերակային-տիպաբանական ուսումնասիրությունն է, որն առանձնապես հայերենի նկատմամբ կարող է կիրառվել ավելի համգամանալից ձևով:

7. Հ.-ե. արմատի տարբերակային վերականգնումը, բնականաբար, եղել է նաև նախորդ ուսումնասիրողների ուշադրության առարկան, և այս առումով կա որոշակի ավանդույթ: Սակայն մոր մոտեցման կամ սկզբունքի մշակումն ու իրագործումը կարող են դառնալ ուրույն ուսումնասիրության բնագավառ, որն առաջին հերթին նպաստելու է հայերենի առանցքային (հ.-ե. ծագման) երևույթների ավելի

մանրամասն քննությանը և դեռևս չբացահայտված շատ խնդիրների ինչ-որ չափով պարզաբանմանն ու լուծմանը: Այդ երևույթները մինչև այժմ քննության են առնվել զուտ լեզվաբանական տեսանկյունից՝ ինչ-որ չափով չբացահայտված խնդիրներով համապատասխան կողմը, մասնավորապես հ.-ե. ժառանգություն հանդիսացող այն պատկերացումները, որոնք այս կամ այն կերպ արտացոլված են հայկական դիցաբանության, առասպելաբանության և այլ մշակութային դրսևորումների մեջ:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. V. G. Hambardzumyan. Linguistic Variations and the Investigations of the Phonemic Variantes of Old Armenian Literary Language. "Sixieme Colloque Internationale de Linguistique Armenienne. Abstracts", Paris, 1999. Վ. Գ. Համբարձումյան Հնդեվրոպական արմատի տարբերակայնությունը և հայերեն **աստված** բառի ծագումն ու տիպաբանությունը. «Պատմա-բանասիրական հանդես», 2002, 3, 242-260, **Առյճի** Հայերեն **աստված** բառի ծագումն ու տիպաբանությունը, Երևան, 2002:
2. H. Pedersen, Die gemeinindoeuropäischen und die vorindoeuropäischen Verschlusslaute. Det Kgl. Danske Videnskaberne selskab. Neddleeser XXXII, 5. Kobenhavn, 1951. A. Martinet Remarques sur le consonantisme sémitique. "Bulletin de la Société de Linguistique de Paris", t. 49, fasc. 1, 67-78:
3. Т. В. Гамкрелидзе и В. В. Иванов, Лингвистическая типология и реконструкция системы индоевропейских смычных. "Конференция по сравнительно-исторической грамматике индоевропейских языков. Предварительные материалы", М., АН СССР, 1972, сс. 15-18. Т. В. Gamkrelidze and V. V. Ivanov, Sprachtypologie und die Rekonstruktion der gemeinindogermanischen Verschlüsse-"Phonetica", 27, 1973, ss. 150-156: J. P. Hopper, Glottalised and murmured occlusives in Indo-European. "Glossa", 1973, 3, pp-141-166. "The Journal of Indo-European Studies", vol. 5, Number 1, 1977, pp. 41-53 (նույնը տես Մ. Դ. Խոппер, Типология праиндоевропейского набора сегментов. "Новое в зарубежной лингвистике", вып. XXI, М., 1988, сс. 160-172):
4. P. J. Hopper., "Decem" and "Taihun": an Indo-European isogloss. "Bono Homini Donum. Essays in Historical Linguistics in Memory of J. Alexander Kerns", part I, Amsterdam, 1981, pp. 133-142 (նույնը տես Մ. Դ. Խոппер., Языки "decem" и "taihun": индоевропейское изоглосса. "Новое в зарубежной лингвистике". вып. XXI, М., 1988, сс. 174, 173-182):
5. Т. В. Гамкрелидзе, В. В. Иванов, Индоевропейский язык и индоевропейцы: Реконструкция и историко-типологический анализ праязыка и протокультуры, I-II, Тбилиси, 1984, сс. 17, 41:
6. Տես Հ. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, հ. 3, Երևան, 1977, էջ 82-84, Գ. Բ. Ջահուկյան, Հայոց լեզվի պատմություն. Ուխտագրային ժամանակաշրջան, Երևան, 1987, էջ 142, 185, 214:
7. Т. В. Гамкрелидзе, В. В. Иванов, указ. соч., ее. 154-155. М. Майрхофер, "Индоевропейская грамматика. т. 2. Фонетика (տես "Новое в зарубежной лингвистике", XXI, М., 1988: сс. 126, 136-148):
8. Հ. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, հ. 3, Երևան, 1977, էջ 25: Գ. Ջահուկյան, նշվ. աշխ., էջ 530:
9. Հ. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, հ. 2, Երևան, 1973, էջ 124, այլև հ. 3, էջ 599-600, Գ. Ջահուկյան, նշվ. աշխ., էջ 187:
10. Т. В. Гамкрелидзе, В. В. Иванов, указ. соч., сс. 402, 220. М. Майрхофер, указ. соч., с. 127: Այս նույն տեղում տես նաև ցեղակից լեզուների համեմատելի ձևերը: Իսկ հայ.

- րմ-, (h) -բաղադրիչների համար կարելի է համեմատել հայ. անձեռոցիկ և նման կազմությունները:
11. Տե՛ս, օրինակ, *Т. В. Гамкрелидзе*, Индоевропейская "Глоттальная теория" и система древнеармянского консонантизма. "Международный симпозиум по армянскому языкознанию. Доклады", Ереван, 1984, сс. 31-34: *M. Mayrhofer*, Sanskrit und die Sprachen Alteuropas. Zwei Jahrhunderte des Wiederspiels von Entdeckungen und Irrtümern. Göttingen, 1983 (նույնը տե՛ս *М Майрхофер*, Санскрит и языки Древней Европы. Два века открытий и диспутов. "Новое в зарубежной лингвистике", вып. XXI, М., 1988, сс. 507-530):
 12. *М Майрхофер*, указ. соч., с. 530, примеч. 73: Տե՛ս, նաև Վ. Գ. Համբարձումյան, Հայերեն աստված բառի ծագումն ու տիպարանությունը, Երևան, 2002, էջ 15:

В. Г. АМБАРЦУМЯН

Проблемы вариантивной реконструкции и типологического анализа корней индоевропейского происхождения в армянском языке

Резюме

При сравнительной реконструкции и типологическом анализе индоевропейских корней определенное значение имеет вариантивное изучение армянских корней. Армянский язык характеризуется древнейшими (архаическими) чертами вариантивного проявления не только звуковой системы, но и структуры корня.

В статье рассматриваются как известные, так и относимые по сей день к ряду „неизвестного происхождения“ корни (ср. հետք „след“, ոտն „нога“, յետ, ետ „назад, вспять“ // փշուկ-փշ բշտիկ, հաճիր „поцелуй“ // ըմպել „пить“ // քերակ „рот“ и др.), которые служат образцами реализации выдвигаемого автора в последнее время подхода к вариантивно-типологическому анализу.

V. G. HAMBARDZUMYAN

Problems of Variative Reconstruction and Typological Analysis of Indo-European Roots in Armenian

Summary

Variative study of Armenian roots is of special significance for comparative reconstruction and typological analysis of Indo-European roots. Armenian depicts archaic traits of variativeness of phonetic system as well as root structure.

The article discusses some variative roots that are known and some that are still of unknown origin (cf. het "trace", ot "foot", yet "backward") et // a-pt-ak "slap", hamboyr // "kiss" // օրթոս "drink" // beran "mouth" etc.) which are examples of the variative-typological approach to comparative analysis suggested by the author.